ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԲՄ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը, որը գտնվում է ք. Երևան, Բագրևանդի 5 հասցեում, ստորև ներկայացնում է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/5» ծածկագրով ԲՄ ընթացակարգի արդյունքում 2018թ-ի մարտի 27-ին կնքված N ԲՄԱՊՁԲ-7/5-1 ծածկագրով պայմանագրում 2018թ-ի մայիսի 30-ին կատարված փոփոխության (այսուհետև՝ Փոփոխություն) վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

Փոփոխության պատճառ: Համապատասխան ֆինանսական միջոցների նախատեսումը:

Փոփոխության նկարագրություն.

Նկատի ունենալով, որ հատկացվել է համապատասխան ֆինանսական միջոցներ՝ կնքվել է համաձայնագիր 2018թ. մասով ապրանքների ձեռք բերման պայմանագիրը ուժի մեջ մտնելու վերաբերյալ:

Փոփոխության հիմնավորում: Սույն փոփոխություն կատարվում է՝ հիմք ընդունելով Պայմանագրի 8.13 կետը: Սույն փոփոխությունը չի դասվում ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ սահմանված արհեստական փոփոխությունների շարքին:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ԳՓՁ վարչության բաժնի պետ Ա. Գրիգորյանին:

Հեռախոս՝ 010-29-44-18:

Էլ. փոստ՝ a.grigoryan@mil.am:

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն:

Հավելված N 1

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

	Գնման առարկան	Չ/մ	Միավորի գինը (ՀՀ դրամ)	Քանակը	Ընդհանուր գումարը	Ապրանքի մատակարարումը 2018թ. ըստ ամիսների						
						Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր
1	Տավարի միս	կգ	1 748	162 968	284 868 064	23000	23000	23000	23000	23000	23000	24968
Ընդհանուր գումարը՝ 284 868 064 (երկու հարյուր ութսունչորս միլիոն ութ հարյուր վաթսունութ հազար վաթսունչորս) ՀՀ դրամ												

Ծանոթություն՝ Մատակարարման վայրը՝ ք.Երևան, Սարմի 103 հասցեում:

Հավելված N 2

Վճարման ժամանակացույց

Հ/հ	Ապրանքի ֆինանսավորման անվանատուի անվանումը	*Նախատեսվում է ֆինանսավորել 2018թ. ըստ ամիսների, բայց ոչ ուշ քան 10.12.2018թ								
		CPV-ի կոդը	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր
1	Տավարի միս	15111100/305/9/3	40204000	80408000	120612000	160816000	201020000	241224000	284868064	284868064

* *Վճարման ենթակա գումարը ներկայացված է ամբողջական կարգով:*

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1

№ ԲՄԱՊՁԲ-7/5-1 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 30-ը մայիսի 2018թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետի ՊԺԿ Կ. Կարապետյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Գնորդ, մի կողմից և «Էրիզ» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Ա. Ասլանյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Վաճառող, մյուս կողմից, հիմք ընդունելով 27.03.2018թ. կնքված № ԲՄԱՊՁԲ-7/5-1 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.13 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

1.1 Սույն Համաձայնագրով Վաճառողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով և ձևով, Համաձայանագրի № 1 Հավելվածով՝ նախատեսված ժամկետներում և ծավալներով Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին որպես սեփականություն հանձնել Պայմանագիրի № 1 Հավելվածով նախատեսված տեսակի և որակի սննդամթերք (այսուհետև՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

2. Համաձայնագրի գինը և վճարման կարգը

2.1 Սույն Համաձայնագրով Վաճառողի մատակարարած Ապրանքի միավորի գինը ներկայացված է սույն Համաձայնագրի № 1 հավելվածում: Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է 284 868 064 (երկու հարյուր ութսունչորս միլիոն ութ հարյուր վաթսունութ հազար վաթսունչորս) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

2.2 Գնորդն իրեն հանձնած Ապրանքի դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 3.2 կետին համապատասխան, 15 բանկային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ քան 10.12.2018թ (Հավելված N 2):

3. Այլ պայմաններ

3.1. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

Համաձայնագրի (պայմանագրի) պայմանները կիրառվում են պայմանագիրը կնքելուց հետո մինչև դրա հիման վրա համաձայնագիր կնքելը կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ: Ընդ որում պայմանագիրը կնքելուց հետո մինչև դրա հիման վրա համաձայնագիր կնքելը վաճառողի կողմից ապրանքի մատակարարման դիմաց վճարումն իրականացվում է այդ համաձայնագիրը, ինչպես նաև պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու դեպքում:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3. Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4. Սույն Համաձայնագիրը կազմված է 2 թերթից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն Համաձայնագրի № 1, № 2 Հավելվածները՝ բաղկացած են 1 թերթից, հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՋՈՒ թիկունքի վարչությունը:

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ք. Երևան, Բագրևանդի 5	«Էրիզ» ՍՊԸ
ՀՀ ֆինանսների նախարարության	ք. Երևան, Նաիրի Զարյան 24
աշխատակազմի [illegible] վարչություն	«Հայբիզնեսբանկ» [illegible]
Հ/Հ 90001114[illegible]	Հ/Հ 1150052[illegible]
ՀՎՀՀ 025221[illegible]	ՀՎՀՀ 00089186
ՀՀ պաշտպանության նախարարության	
ՆՏԱ դեպարտամենտի [illegible]	տնօրեն
[illegible] ԱՊԵՏՅԱՆ	Ա. ԱՍԼԱՆՅԱՆ

Հավելված N 1

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

	Գնման առարկան	Չ/մ	Միավորի գինը (ՀՀ դրամ)	Քանակը	Ընդհանուր գումարը	Ապրանքի մատակարարումը 2018թ. ըստ ամիսների						
						Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր
1	Տավարի միս	կգ	1 748	162 968	284 868 064	23000	23000	23000	23000	23000	23000	24968
Ընդհանուր գումարը՝	284 868 064 (երկու հարյուր ութսունչորս միլիոն ութ հարյուր վաթսունութ հազար վաթսունչորս) ՀՀ դրամ											

Ծանոթություն՝ Մատակարարման վայրը՝ ք.Երևան, Սարմի 103 հասցեում:

Հավելված N 2

Վճարման ժամանակացույց

Հ/հ	Ապրանքի ֆինանսավորման անվանատողի անվանումը	*Նախատեսվում է ֆինանսավորել 2018թ. ըստ ամիսների, բայց ոչ ուշ քան 10.12.2018թ								
		CPV-ի կոդը	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր
1	Տավարի միս	15111100/305/9/3	40204000	80408000	120612000	160816000	201020000	241224000	284868064	284868064

* *Վճարման ենթակա գումարը ներկայացված է առողջական կարգով:*

ԳՆՈՐԴ

ք. Երևան, Բագրևանդի 5
ՀՀ Ֆինանսների նախարարության
գանձապետական գործառնական վարչություն
00901114035
[illegible]
ՀՀ արդարադատության նախարարության
Նշված գործառնական պետի ՊԺԿ՝

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Էրիզ» ՍՊԸ
ք. Երևան, Նարեկացու 24
«Հայաստանի բանկ» ՓԲԸ
Հ/Հ 1530052181818
ՀՎՀՀ 00089186
տնօրեն՝

Ա. ԱՍԼԱՆՅԱՆ